

<<Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր >> ՓԲԸ-ի

զարգացման ծրագիր

<<Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր>> փակ բաժնետիրական ընկերությունը առևտրային կազմակերպություն է, իրականացնում է գործունեություն հետևյալ հիմնական տեսակներով՝

1. հիվանդանոցային բժշկական օգնություն
2. մասնագիտացված դիսպանսերային բժշկական օգնություն
3. բժշկական վճարովի ծառայություններ

Ընկերությունը 20.06.2003թ. ՀՀ ԱՆ-ի կողմից ստացել է լիցենզիա Կ-XX- 000127 հետևյալ բժշկական օգնության և սպասարկման տեսակների համար՝ **ուռուցքաբանական / ամբուլատոր և հիվանդանոցային/, լաբորատոր ախտորոշիչ /կլինիկական, բիո-քիմիական, բջջաբանական/ ներհիվանդանոցային դեղատուն:**

I Հիվանդանոցային բուժօգնությունը իրականացվում է բուժօգնություն և սպասարկում արյունաբանական, չարորակ և բարորակ նորագոյացություններով հիվանդների վիրահատական, քիմիո-թերապևտիկ և ճառագայթային բուժումներ հետևյալ երկու բաժանմունքներում՝

1. Ընդհանուր օնկո-վիրաբուժական, այդ թվում գինեկոլոգիական, 15 մահճակալ
2. Ընդհանուր քիմիո-թերապևտիկ, այդ թվում ճառագայթային, 15 մահճակալ

Ընկերությունում գործում են հետևյալ **ախտորոշիչ լաբորատորիաները՝**

ա/ Կլինիկական լաբորատորիա

բ/ Սոնոգրաֆիա

գ/ Ռենտգենեգրաֆիա

դ/ Բջջաբանական

ե/ Հյուսվածքաբանական

ը/ Էնդոսկոպիկ

II Դիսպանսերային հսկողությունը և բուժօգնությունն ընդգրկում է.

1) Գյումրու, Աշոցքի և Ամասիայի տարածաշրջանների հիվանդների բուժկանխարգելիչ օգնության ցուցաբերումը, հիվանդների դիսպանսերային

շարունակական հսկողության ապահովումը՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված դիսպանսերային հսկողության չափորոշիչների

2) հիվանդների հաշվառումը, սահմանված ձևով վիճակագրական տվյալների ամփոփումը

3) բնակչության շրջանում հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ առողջ ապրելակերպի քարոզչությանն ուղղված միջոցառումների իրականացումը, կազմմեթոդական աշխատանքների ապահովումը

4) անհրաժեշտության դեպքում հիվանդանոցային բուժման կազմակերպումը.

5) ախտորոշման ճշտման նպատակով անհրաժեշտ լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների ապահովումը:

Ընկերությունը նախորդ տարիների ընթացքում կատարված աշխատանքներ են՝

1. Ընկերության շենքի կտուրի հիմնովի վերանորոգումը
2. Նոր ժամանակակից սրտագրության սարքավորման անհատույց ձեռքբերումը
3. Կլինիկական լաբորատորիայի ժամանակակից անալիզատորի ձեռքբերումը
4. Բրախիթերապիայի սարքավորման Philips սարքավորման վերանորոգումը <<Վիվա>> կամավոր բժիշկներ կազմակերպության կողմից:
5. 2019թվականի ծախսային նախահաշվով պլանավերվել և իրականացվել է ընկերության դիսպանսեր և ճառագայթային բաժանմունքների ջեռուցման անցկացումը և գազամատակարարումը
6. Ապահովել է ընկերության բուժանձնակազմի պարբերական մասնագիտական վերապատրաստումը:

Ընկերության հետագա զարգացման գերնպատակ է հանդիսանում չարորակ հիվանդություններով հիվանդների բուժօգնության և ծառայությունների բարձր որակ, ամբողջ աշխատակազմի հոգացություն հիվանդների նկատմամբ:

Բարձրացնել աշխատակիցների աշխատավարձը՝ խնայողությունների և վճարովի ծառայությունների հաշվին: Մարզի տարբեր շրջաններում կազմակերպել բաց դռների օր, որը կնպաստի չարորակ նորագոյացություններով հիվանդների վաղ հայտնաբերմանը:

Կարևոր է բարձրացնել ուռուցքաբանական հիվանդությունների վաղ հայտնաբերման դեպքերի տեսակարար կշիռը, գյուղական ազգաբնակչության

մասնագիտական բուժօգնության սպասարկման ընդգրկվածությունը ուժեղացնելով կապը առաջնայի օղակի հետ:

Անհրաժեշտ է ապահովել ընկերության ֆինանսական հոսքերի նպատակաուղղված և ռացիոնալ օգտագործումը մատուցվող ծառայությունների ֆինանսավորման ծավալների ավելացում: Վճարովի ծառայություններից կատարել ֆինանսավորման աղբյուրների և ծախսերի վերլուծություն:

Գյումրու ուտուցքաբանական դիսպանսեր ՓԲԸ-ի զարգացման ծրագրի հիմնական հարց է հանդիսանում դիսպանսերում ճառագայթային բաժանմունքում տեղադրված <<AFAT P1>> և <<Bebig GyneSource>> սարքերի վրանորոգման և վերալիցքավորման հարցերը , որոնց միջոցով իրականացվում է հեռահար և ներխոռոչային ճառագայթային բուժումը:

2019թ.-ի հունվարին-ից մինչև փետրվար տեսչական ստուգումով Գյումրու ուտուցքաբանական դիսպանսեր է այցելել իրենց <<Մագալտե>>-ի ներկայացուցիչը:

Ստուգումների ընթացքում հետազոտվեց բոլոր փաստաթղթերի առկայությունը, ճառագայթային անվտանգության հարցերը, սարքավորումների տեխնիկական վիճակը, աշխատող անձնակազմի մասնագիտական փաստաթղթերի առկայությունը և համապատասխանությունը ըստ գործող հրահանգի:

Ստուգումների արդյունքների արձանագրությունը ներկայացվել է Առողջապահության նախարարություն:

2019թվականի ապրիլին ընկերություն նաև այցելել են Ամերիկայի էներգետիկայի նախարարության և Հայպետ Ատոմ հսկողության աշխատակիցները: Ծանոթացան նորմատիվային փաստաթղթերին և Ամերիկայի էներգետիկայի նախարարության աշխատակիցները առաջարկեցին ճառագայթային բաժանմունքի վերակառուցման և ընդլայնման աշխատանքների ֆինանսավորումը վերցնել իրենց վրա: Միևնույն ժամանակ կատարել ճառագայթային սարքավորումն ապամոնտաժման և հին <<Կոբալտ 60>> -ի տեղափոխման և ոչնչացման ծախսերը:


Ընկերությունը խիստ կարիք ունի նյութատեխնիկական բազայի վերազինման, հիվանդանոցային և դիսպանսերային բժշկական օգնություն բարելավման և սպասարկում ցուցաբերող ստորաբաժանումների ժամանակակից սարքավորումների ձեռքբերման, որի համար միայն պետական բյուջեի հաշվին արդիականացումը անհնարին է, ուստի այս

նպատակի իրագործման համար անհրաժեշտ է ներգրավել միջազգային կազմակերպությունների միջոցները: Պլանավորվում է ձեռք բերել ժամանակակից լաբորատոր գործիքային սարքավորումներ, ֆունկցիոնալ մահճակալներ, վիրահատական գործիքներ: Նախատեսվում է հաջորդ տարի հիմնովին վերանորոգել ռենտգեն-ախտորոշիչ բաժանմունքը:

Ընկերությունը դիմել է «Վիվա» կամավոր բժիշկներ կազմակերպությանը և պայմանավորվածություն է ձեռք բերվել անհատույց ձեռքբերել ժամանակակից ուլտրաձայնային և կլինիկական լաբորատորիայի սարքավորումներ, որոնք կբավարարել ժամանակակից պահանջներին:

Ընկերության կարևորագույն խնդիր է համարում բուժօժանայությունների որակի և մատչելիության բարձրացումը: Հաշվի առնելով մարզի առանձնահատկությունները՝ միջհամայնքային հեռավորությունը և այլ ցուցանիշները, ընկերության ռազմավարությունը ներառում է հիմնական ուղղվածություն՝ արտահիվանդանոցային և մասնագիտական հիվանդանոցային ծառայությունների որակի բարելավում, որը կկանխի Շիրակի տարածաշրջանի ազգաբնակչության հոսքը մայրաքաղաք:

Գյումրու ուտոցքարանական դիսպանսեր ՓԲԸ
տնօրեն՝



Վ.Ս.Շիրինյան